ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2026 թվականի N 993-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 357-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 357-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) ցանկի 2-րդ կետի «Քանակը» սյունակի «5 000» թիվը փոխարինել «10 000» թվով.

2) ցանկի 2-րդ կետի «Արժեքը» սյունակի «25 000 000» թիվը փոխարինել «50 000 000» թվով.

3) ցանկի 5-րդ կետի «Քանակը» սյունակի «150,000» թիվը փոխարինել «300 000» թվով.

4) ցանկի 5-րդ կետի «Արժեքը» սյունակի «7 500 000» թիվը փոխարինել «15 000 000» թվով.

5) ցանկի 6-րդ կետի «Քանակը» սյունակի «50,000» թիվը փոխարինել «100 000» թվով.

6) ցանկի 6-րդ կետի «Արժեքը» սյունակի «3 000 000» թիվը փոխարինել «6 000 000» թվով.

7) ցանկի 7-րդ կետի «Քանակը» սյունակի «500 000» թիվը փոխարինել «1 000 000» թվով.

8) ցանկի 7-րդ կետի «Արժեքը» սյունակի «28 000 000» թիվը փոխարինել «56 000 000» թվով.

9) ցանկը 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-24-րդ կետերով՝

«

23.	2905450009	Գլիցերին (Refined Glycerine 99.7%)	թափանցիկ, անգույն, օշարականման հեղուկ առանց հոտի, նախատեսված բժշկական մոմիկների արտադրության համար	կգ	40 000	Մալայզիա	Մալայզիա	38 000 000	
24.	1516209808	Պինդ ճարպ Hard Fat (HPKO 36-38)	բուսական ծագման ոչ սննդային յուղ, նախատեսված բժշկական մոմիկների արտադրության համար	կգ	10 000	Մալայզիա	Մալայզիա	25 000 000	

».

10) ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «187 061 000» թիվը փոխարինել «313 561 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ